

## ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

### ՕԾԱԿԱՆԻ 1286 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ «ՔԵԹՈԲԱՐ» ՎԱՐՉԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԸ

Կորյունի տեղեկությամբ՝ «անդէն ի ճամին ամի (իմա՝ 439-ին), յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելույն Սահմանայ, լինէր համերձ սրբով Վարդապետան քանակն Հայոց յԱրարատեան ի Նոր քաղաք, և նովին հոգեկործ վարործ հասանէր սրբոյն քրիստոնակոշ կատարումն՝ յետ սակաւ ինչ առորդ հիւանդութեանն յերեցուասմերորդում ամսեանց Մեմինկամի»<sup>1</sup>: Հայոց Մեծաց հազարավետ Վահան Ամատումին և Հմայակ Մամիկոնյանը, «հանդէրձ աշխարհական ամբոխի, սահմոսից և օրինութեամբ և հոգենոր ցնծութեամբ, կանթեղօր վառելովք և շահից բորբոքելովք և խնկօր բորբոքվել և ամսնայն լուսաճանաչ զնիմ, և այնու խաչանշան լուսաւոր յառաջախաղաց նշանան յօշականն երանէին, և անդ ի մարտիրոսարանց մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն աներևոյթ լինէր, և նոքա յիշարաբնչիր դառնային տեղիսն»<sup>2</sup>:

Հստ Վարքի ընդարձակ խմբագրության, հուղարկավորությունից երեք տարի անց՝ «լաջողեցան Վահանայ Ամատունու քրիստոնասէր փութով խորան սրանշելի կանգնել տաշածոյ վիմօր քանդակելովք, և ի ներքսագոյն խորանին զարդոյն հանգիստ յօրինեալ... և ամսնայն սրբովք ի միասին զումարելովք զմարմին խաչակործ վկային Քրիստոսի՝ երանելույն Մաշտոցի ի հանգիստ խորանին փոխէր»<sup>3</sup>: Վարքի համառոտ խմբագրությունը (Գ) երեք տարվա փոխարեն տալիս է երեք ամիս, իսկ Ամատունու կառուցածը կոչում «տաճար փառաց անուանն Աստուծոյ»<sup>4</sup>, որը «ի տաշածոյ վիմաց սրանշելապէս յարինեալ խորան և գեղեցկապէս կազմեալս. և անդ ի ներքսագոյն խորանին զարդոյն հանգիստն առնել...»:

Ինքնին հասկանալի է, «տաճար փառաց»-ը երեք ամսում կառուցելիք չէ, ուստի կամ պիտի սրբագրել ըստ ընդարձակ տարբերակի՝ «յետ երից ամաց անցելոց»,

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի: Բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, բարզմանությամբ, առաջարանով և ծանրագրություններով ի ձեռն պրոֆ. դ.-ր Մանոկ Աքեղյանի: Երևան, 1941, էջ 92 (գլ. իջ): Վերջին հրատ. տես՝ Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի: Աշխատությամբ՝ ձեռագրագիտ Արտաշեն Մաթեոսյանի: Երևան, 1994, էջ 104-105: Այս հրատարակության մեջ մեզ հնատարրող դրվագն ստացել է ինչ համարը:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Նովյան տեղում:

<sup>4</sup> Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, էջ 125:

կամ «տաճար»-ի փոխարեն «խորան»-ը նախընտրել՝ սուրբգովական «Վրան» (տաղաւար) նշանակությամբ: Բնագորագիտական-տերմինաբանական քննությունն ավելորդ է, որովհետև խոսքը վերաբերում է մինչև Առաքել Դավիթինցու օրերը պահպանված և Փիլիպոս Կաթողիկոսի (1633-1655) հոգածությամբ նորոգված կառուցին: Առաջ Առաքել Դավիթինցու նկարագրությունը. «Այլ և զի՞յակապ և զլայնամիստ և զբարձրաբերձ տաճար փառացն Աստուծոյ, զիանգստարան մեծի վարդապետին սրբոյն Մետրոպրայ այնորին, որ եզիս զգիս Հայոց, որպէս և բանը պատմութեան նորա ճառեն, թէ տարեալ հանգուցին զնա ի գիտեն, որ անուանի Օշական. արդ այս տաճար հանգստարանի սրբոյն Մետրոպրայ վարդապետին ի վաղ ժամանակաց բովանդակ տաճիքն փլուզեալ իշեալ էր, և միայն աւագ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթողիկոսութեան իրոյ սուրբ հայրապետու Փիլիպոս Ակսաւ զայն և նորոգել, որ և կատարեաց բազում ծախիք և աշխատութեամբ, խրատեալ քարի և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զրովանդակն ի թուակամիս մերոյ ՌՊԴ, ի փառ Աստուծոյ»<sup>5</sup>:

Լրացուցիչ տեղեկությունների բացակայության պատճառով չենք կարող ասել, թե իր հիմնարկության օրից մինչև 1645 թ. այս նորոգումը Ամաստունու կառուցած տաճարը (կամ խորանը) ինչ փոփոխություններ է կրել կամ արդյո՞ք ունեցել է Փիլիպոս Կաթողիկոսի նորոգությանը նախորդած վերականգնման մեկ այլ շրջան: Կարող ենք վստահ լինել սակայն, թե այս հետինակավոր կենտրոն էր իր գոյության ողջ ընթացքում: 607 թ. Դվինի ժողովի մասնակիցների թվում է Օշականի վանահայր Խորուպը<sup>6</sup>: Եկեղեցին կանգուն էր և իրոք աղոթարան լիարժեք գործում էր նաև XIII դարում: Այս եղանակացությունը հենվում է կառուցիչ տարբեր մասերում, մասնավանդ ներքուստ, մինչև անցյալ դարի 40-ական թվականները պահպանված և Հովի: Ծահսաթումյանցի վերծանությամբ հրատարակված հինգ արձանագրության գոյության փաստով, որոնցից չորսը փորագրված են 1285-1295 թվականների միջոցին<sup>7</sup>: Ցավոք, 1875-1879 թվականների արմատական վերանորոգումների ընթացքում պահանջվելիք զգուշակություն չի ցուցաբերվել, և եղած արձանագրությունները մնացել են ծեփի տակ կամ նույնիսկ՝ ոչնչացել:

Նշված հինգ արձանագրություններից այստեղ մեզ զրադեցնողը «ի հիւսիսային հիման կամարին սեղանոյ յարևմտեան ճակատու» գտնվող ու 1286 թ. գրվածն է: Առաջ արա տեքստուն ըստ Հ. Ծահսաթումյանցի վերծանության: «Ի թուին եօթն հարիր երեսուն և հնգին (1286) ողորմութեամբն Աստուծոյ և հրամանաւ պարոն Սահմարինին (Կարդա՛ Սահմադինին), ես՝ Ստեփանոս ձեռնաւորս և Վահրամ քեթորարս... թողաք զթօշականու քահանայից զինչ, որ հարկ կայր այգույ, բամբակի... և ժամհարի՛ յիշատակ Հոգոց մերոց և ամուսնաց: Եւ սոքա խոստացան

<sup>5</sup> Առաքել Դավիթինցի, Գիրք Պատմութեամց: Աշխատասիրությամբ Լ. Ա. Խամլարյանի: Երևան, 1990, էջ 284-285:

<sup>6</sup> Տե՛ս Ուխտանես Եպիսկոպոս, Պատմություն Հայոց: Վաղարշապատ, 1871, էջ 64:

<sup>7</sup> Ստորագրություն կաթողիկէ Էջմիածնի և Բիհմ զաւառաց Արարատաւ: Աշխատասիրութեամբ Ցովիանու Եպիսկոպոսի Ծահսաթումյանց Ծահմիարցոյ՝ միաբանի սրբոյ Էջմիածնի: Հատ. Բ. Էջմիածնի, 1842, էջ 76-81 (§ 398):

ի տարւոց գ. ժամ յաւոր ծանդեանն. Բ. Ստեփանոսա, Ա. Վահրամայ: Ով որ ժամանակաց խափանել շանայ, ՅԺԸ նայրապետացն նզոված է և մեր մեղացն պարտական է»<sup>8</sup>:

Պարոն Սահմադինը, որի հրամանն են կատարում ձեռնավոր Ստեփանոսն ու քաթորար Վահրամը, վիմագիր ու պատմողական բազում աղբյուրներից բաշ հայտնի XIII դարի երկրորդ կեսի գործիչ է, մոնղոլ խաների նովանավորությունը շահած Ամիի երեք տիրակալներից մեկը, որը 1261 թ. գնեց Մրենը<sup>9</sup>, 1264-ին՝ Երևանը<sup>10</sup>, ավելի ուշ՝ Օշականը ու այլ բնակավայրեր Ալբարատում, Շիրակում, Քաշքերումից ու ալլոր: Նորօրյա այս մնացունքն սեփական հորինվածքով պայտու ու պարտներ է շինել, 10 տարում առ այդ ծախսելով 40.000 դուկատ: Մրենի մեկ այլ՝ 1273 թ. արձանագրություններ տեսնեկանում ենք, որ Սահմադինը նույն Մրենուն ու Օշականուն գտնվող՝ Արշուարինի վանքին պատկանող այգիները ազատել է խալայից ու լրացուցիչ հարկերից («Ճակեղորդ հարկէ»)<sup>11</sup>: Խճշես երևում է, օշականցի և կենացականները շարունակել են վճարել հարկերը և միայն 1286-ին ազատվել այցու, բամբակի բոլոր հարկերից («զին որ հարկ կայր»): Ի ենպ, Օշականի եկեղեցու մյուս երեք արձանագրությունների մեջ ևս խոսքը հարկերի թեթևացման մասին է: 1288-ին Սահմադինը թողել է «զՅօշականո զիացի և զդարմանի զշարիատ» զՎերի և զՆերքի զամեն՝ հանդիսացնելու համար՝<sup>12</sup>, ապա նաև պարոնի համաձայնությամբ ամիրա Գեշնարդն ու Հավիկ ձեռնավորը զիշել են Օշականի ու Մրենի այգիներից ձեռնավորի օգտին զանձվող հարկը՝ «զին որ կայր»<sup>13</sup>: Մի քանի տարի անց, 1295-ին, Սահմադինի թոռ, պարոն Ամիրերկի որդի Բենութան Օշականն ազատում է (զյուն ու վանորայք միաժամանակ) «Հէսարամ» կոչվող հարկից:

Տակավին ճշգրտելիք է, թե այս հարկը ինչ է իրենից ներկայացնում, բնամթերքո՞վ է զանձվում, թե՞ փոխարժեքով և ի՞նչ հարաբերությամբ<sup>14</sup>, բայց հարկերի այս շարունակական թեթևացումը ամենակին բարեկեցության աճ չի պայմանավորում: Ծիշու հակառակը, այդ նշանակում է, թե մոնղոլ Հուլայու (1256-1265), Արայա (1265-1282), Թեգուտար (1282-1284), Արդուն (1284-1291) և Քելխուտա (1291-1295) իշխանների օրոր տնտեսական ճգնաժամը զմալով խորացել է (հայ-կոհացական զորքերը անընդմեջ պատերազմական զործողությունների էին մասնակցում, աշխարհագիրների արդյունքում հարկերը ծանրացել էին, ցանքատարածությունները կրճատվել և ալլու)<sup>15</sup>:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>9</sup> Ի. Օրբելի, Նադիս Մրեն, («Հայագիտական Բնտապություններ», Ալ: Երևան, 1974, էջ 41-42):

<sup>10</sup> Կար Ղաֆադարյան, Երևան, միջնադարյան հուշարձաններ: Երևան, 1975, էջ 137:

<sup>11</sup> Ի. Օրբելի, Աշկ. աշխ., էջ 39:

<sup>12</sup> Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի..., էջ 78:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>14</sup> Հմտու Հակոբ Մանանդյան, Երկեր, Գ: Երևան, 1977, էջ 295:

<sup>15</sup> Հմտու Հակոբ Մանանդյան պատմություն, Բ. III: Երևան, 1976, էջ 620-668: Խաչ. Խկ. Զավահիշվիլի, Երկեր տասներկու հատորով, Բ. III : Թրիլիսի, 1982, էջ 96-116 (վլացերեն):

Օշականի արձանագրություններում հիշատակվող վարչական տերմինները հայտնի են այլ աղբյուրներից ևս (ամիրայ, ձեռնաւոր...) և մասնագետների կողմից հանգամանորեն քննարկված են (Ն. Մատ, Գ. Հովսեփյան, Հ. Մանանյան, Լ. Խաչիկյան, Ս. Հակոբյան, Բ. Առաքելյան, Ս. Ավազյան)<sup>16</sup>: Վկայված են նաև այդ պաշտոնյանների օգտին գանձվող հարկերը՝ ամիրահակ, ձեռնավորահակ: Սակայն այդ նույնը ասել չենք կարող «Քերոբարի» վերաբերմաբ, որ գիտությանը հայտնի է միայն Օշականի 1286 թվականի արձանագրությամբ: Հր. Աճայշանի տված ստուգարանությամբ այն պարսկերեն Կիւնալ-բերդապահ բառն է<sup>17</sup>, որի հետ համաձայն է Ստ. Մալխասյանց<sup>18</sup>, մինչեւ Հ. Մանանյանն այդ ստուգարանությունը թիջ հավանական է համարում և առաջարկում է այն բխեցնել արաբերեն «քաթիբ» (գրագիր, քարտուղար) տերմինից<sup>19</sup>: Լ. Խաչիկյանը վկայակողում է Հ. Մանանյանի մեկնարանությունը և համաձայնվում գրա հետ<sup>20</sup>:

Մեր համոզմամբ՝ առկա ստուգարանություն-բացատրությունները բավարար չափով հիմնավորված չեն.

1) Օշականում XIII դարում գործող բերդ-ամրոց չկար, ուստի և բերդապահի մասին խոսք չպետք է լինի: Եթե անգամ բերդ և բերդապահ լիներ, նա առնչություն չպիտի ունենար եկեղեցու սպանավորների հետ, որ նրանց ազատեր հարկերից: Ուրեմն՝ Կիւնալ-ից բխեցնելը արդարացված չէ:

2) Հարկացուցակներ կազմող մոնղոլական գրագիր-քարտուղարները, Կիրակոս Գանձակեցու և Գրիգոր Ակներցու (Մաղարիա արեղայի) վստահելի հաղորդմամբ, ոչ թե քերոբար, այլ «բիթիկչի» էին կոչվում<sup>21</sup>: Դիվանական և տեղական գրագիրներին տարրերակերու և վերջիններին «քերոբար» կոչվում Հ. Մանանյանի վարկածը հիմնավորված չէ: Ընդ ամեն, դպրի ու դիվանադպրի համար հայկական աղբյուրները գիտեն նաև «ծիկնաւապար, resp. ծիգնոբար» տերմինը<sup>22</sup>:

3) Վիմագիր ու վավերագիր բազմաթիվ աղբյուրներում, ուր այս կամ այն բնակավայրի կապակցությամբ խոսվում է ձեռնավորների մասին, իբրև կանոն

<sup>16</sup> Հ. Mapp, Новые материалы по армянской эпиграфике, ЗВО, т. III. СПб, 1903, стр. 83; Առաջին Ան, Հնագիտական տեղական համայնքի պատմությունը և առաջարկությունը համար համապատասխան պատմությունը, 1934, стр. 42. Գ. Հովսեփյան, Զագավանի ժողովը, «Օղակար»: Էջմիածն, 1913, էջ 34-35, Հակոբ Մանանյան, Զշկ. աշխ., էջ 283-323: Լ. Խաչիկյան, XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, «Պատմաբանական համելու», 1958, թիվ 1, էջ 111-112: Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. I: Երևան, 1957, էջ 415-418: Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում X-XIII դ., Բրատ. 2: Երևան, 1964, էջ 130-131: Ս. Ավազյան, Վիմագիր արձանագրությունների բառարձնություն: Երևան, 1978, էջ 163-164:

<sup>17</sup> Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, IV: Երևան, 1979, էջ 568:

<sup>18</sup> Ստ. Մալխասնանց, Հայերէն բացատրական բառարան, IV: Երևան, 1945, էջ 568:

<sup>19</sup> Հակոբ Մանանյան, Զշկ. աշխ., էջ 262, ծան. 5:

<sup>20</sup> Լ. Խաչիկյան, Զշկ. աշխ., էջ 112:

<sup>21</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն: Աշխատահրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի: Երևան, 1961, էջ 275, Մաղարիա Արեղայ, Պատմություն ազգին Անտոռաց: ՍՊԲ., 1870, էջ 45:

<sup>22</sup> Ստ. Օրբելեան, Պատմութիւն նախանզին Սիսական: Թիֆլիս, 1910, էջ 354:

Արանց մետ միշտակվում և գեղավագները, որոնց իմացությամբ կամ բամաձայնությամբ է տնդի ունենում տնդի բակչության հարկավիճ քնոի թեժացում-ծանրացումը: Այդ պաշտոնյան (գեղավագը) աղբյուրներում միշտակվում է մի քանի անվանումներով՝ տանուտեր, դեմաթեր, առաջնորդ, ավագ, գեղավագ, բյոխա, ույիսի<sup>23</sup>: Օշականի արձանագրության մեջ ձևոնավորի մետ միասին Սահմադիճի հրամանը կատարող Վահրամ քեթորարը զբուղի տանուտերը, ավագը պիտի լինի: Եվ հիրավի՝ «քեթ»-ը պարսկերեն տերմին է և «տուն», «զուղ» է օշանակում. առկա է հայագիտությանը ծանոթ պարսկերեն «քեղյուղա» (գեղավագ) տերմինի կազմում: Այն հանգում է պահավական «քատակ» բառին, որից նոր պարսկերենում ունենք «քադե»-տուն, բնակարան, բնակատեղի<sup>24</sup>:

«Քեթորարը» կազմությամբ կատարելապես «ծիզնորարի» նմանակն է. «ծիզնի» (գիր) + որա (-ույթուն) + ար = գրազիր, քարտուղար. քեթ (զուղ) + որա + ար = գեղավագ, տանուտեր<sup>25</sup>:

Այսպիսով, «քեթորար» վարչական տերմինը կազմվել ու գործածվել է վրաց թագավորության շրջանակում վրացերեն լեզվի նորմերով և արձանագրվել Օշականի 1286 թ. վիմագրում: Այն լրացնում է հայկական աղբյուրներում գործածված վրացական տերմինների շարքը՝ «Մեղոնա» (Քանաքեռ)<sup>26</sup>, «Բալախահակ» (Գառակ)<sup>27</sup>, «Ծիզնորար» և «Քեթորար»:

23 Ս. Գ. Բարխունյարյան. Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ և դիտողություններ. «Հշեր Բայ ժողովրդի պատմության և քանախորության»: Երևան, 1971, էջ 73-78; Ս. Ա. Ավագյան, Աշվ. աշխ., էջ 163-164. Լ. Խաչիկյան, Աշվ. աշխ., էջ 112-115:

24 Դ.-ր. Մոհամմեդ Մուհիմ, Պարսկերեն բառարան. մաս III: Թերթան, 1985, էջ 4919-4921 (պարսկերեն):

25 -ար վերջածնի մասին տես. Ա. Շահնիզե, Два джано-мегрельских суффикса в грузинском и армянском языках.Տես Բնելինակի «Վրաց լեզվի կառուցվածքի և պալոնության հարցեր» վրացերեն գրքում: Թբիլիսի, 1957, էջ 20-24: Պարսկերեն քեդ (տուն, զուղ) բառի և երանու կազմված բառարդումների մասին (Ենթալպ Բունարենի կուտեպանը) տես Հ. Մարք. Ֆիզиолог. СПб., 1904, стр. 76; Բնմ. Վ. Ի. Бенетевич. Три антийские надписи XI века, Пб., 1921, стр. 27-28.

26 Պ. Մ. Մурадյան, Грузинский административный термин *meguynə* в армянской надписи из Канакера. (Материалы первого международного картвелогического симпозиума). Тбилиси, 1988, стр. 167-174.

27 Բ. Ի. Առաքելյան, Գարնի, Ա. Երևան, 1951, стр. 84; Բնմ. Բնմ. III. Երևան, 1962, էջ 45: